«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ Ծաղիկ Միերի Ադամյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ 6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ՍԵՎԱՆ 2023

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ***«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ***

Թեմա՝ ***Արժեքային համակարգի ձևավորումը  առարկայի դասավանդման շրջանակներում***

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

1.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....3

2.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.....3

3.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ.....4

ԳԼՈՒԽ 1.....5

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....5

ԳԼՈՒԽ 2 _____10

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ____10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ_____17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ_____19

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով:Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:Ահա թե ինչու « Արժեհամակարգ' հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից :Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները որոնց թվում,այնուամենայնիվ , արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումանկան առարկաների դերը:Մասնավորապես անգնահատելի է լեզվի և գրականության դերը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային չորս համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ:

Ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտի մոտ ձևավորել աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

Կինոն, թատրոնը,համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի կերպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ 'տեղեկատվական աղբյուրներից հոսող' հերոսների վարքագծում:

Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին:

Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ:**

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների համար հպարտության զգացում:Ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

- Ձևավորել սովորողների ազգային գիտակցությունը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա:
- Ուսումնասիրել տարբեր առարկաների դասավանդման ընթացքում երեխաների մոտ ձևավորված արժեքների բացահայտմանը:
- խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:
- Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ:

# ԳԼՈՒԽ 1

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի (ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական – անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների : Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում,

ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Ռուսաց լեզվի անհամրելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները

ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, դիցուք, հիշատակել Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակ՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Մեզ համար դա տարիներ ի վեր եղել և մնում է համաշխահարհային գրականության այդ հսկայի՝ Լ. Տոլստոյի վերոնշյալ ստեղծագործությունը:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու

երջանկությունը:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

## ԳԼՈՒԽ 2

## ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարեւորում ենք արժեքների ձեւավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում:

Արժեքն երեւույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձեւավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի:

Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, եւ որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր:

Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը:

Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա ե՛ւ ցավ, ե՛ւ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Դպրոցում ազգային արժեքների ձևավորման մեջ մեծ է հայոց պատմության դասաժամերի դերը:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն եւ ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Հայոց պատմություն առարկայի նպատակներից ամենակարևորը, զինելն է աշակերտներին ազգային արժեքներով: Մերօրյա իրականությունը թելադրում է հայ սերնդին, առավել քան երբեք, զինվել գիտելիքով և հայրենասիրությամբ՝ մեր

թուլացած պետականության հիմքերը ամրապնդելու համար: Աչքի առաջ ունենալով ծանր պատերազմի հետևանքով ունեցած մեր կորուստները, և միևնույն ժամանակ մեր զինվորների կատարած հերոսական դրվագները, գալիք սերունդը պետք է լավ գիտակցի իր վրա դրված մեծ պատասխանատվությունը: Այս գործում շատ մեծ է ուսուցիչներիս դերը և մենք անելիքներ շատ ունենք մեր սերնդին հայրենասիրությամբ և ազգային արժեքներով դաստիարակելու գործում: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև միջառարկայական կապերի կարևորության մասին: Առարկաների ճիշտ համագործակցության շնորհիվ է, որ աշակերտների մոտ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը: Կարող ենք նշել պատմություն առարկայի և գրականության կապը ներկայացնելով օրինակը

<<Սասունցի Դավիթ>> էպոսը և արաբական արշավանքները: Էպոսում վեր է հանվում մի ամբողջ պատմական ժամանակահատված ներկայացնելով արաբական հարկային քաղաքականությունը, հայ ժողովրդի ազատատենչության գաղափարը: Գրականության միջոցով ներկայացվում է հերոսների հույզերը և զգացմունքները: Դարեր շարունակ էպոսը կրթել է մեր ժողովրդին՝ տալով նրան կատարյալ մարդու իր իդեալը՝ մանկական մաքուր պարզություն (անաղարտություն), արժանապատվություն, արդարամտություն, վեհանձնություն ունեցողին, որ նաև մարդասեր է, այլասեր, ժողովրդասեր, խաղաղասեր, ազատասեր, հայրենասեր, բարեկամասեր, եղբայրասեր և չարի դեմ պայքարող: Պատահական չէ սեր արմատի կրկնությունը: Այն քրիստոնեական մեր էությունը բնութագրող կարևոր պայման է: Հավատի և հույսի հետ՝ նաև սեր...Այս արժեքներն են, որ փոխանցվում են աշակերտներին և ձևավորում ամուր ու կայուն արժեքային համակարգ:

Արժեհամակարգի ձևավորվան համար անփոխարինելի դեր և նշանակությունունի հայոց լեզուն և գրականությունը: Առարկաների դասավանդման ժամանակ աշակերտները ծանոթանում են հայոց լեզվին և հայ գրականության մեծանուն գրողների չնաշխարհիկ գործերին:

Նրանց մոտ ձևավորվում է հատուկ վերաբերմունք դեպի համամարդկային արժեքները: Ռազմահայրենասիրություն, մշակութային արժեքներ, գեղագիտական արժեքներ, բարություն, ազնվություն, սեր, ճշմարտախոսություն, կամք, քաջություն, ազատություն և այլ արժեքներ են սերմանում աշակերտների մեջ:

Ուսուցիչները գրականության դասաժամերին Հայ գրողների ստեղծագործությունները ներկայացնելով մի ամբողջ արժեքային ֆոնդ են փոխանցում աշակերտներին: Բավական է նշել Եղիշե Չարենցի << Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծությունը, որը ձևավորում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սեր առ հայրենիք և սեր դեպի հայոց մեծերը՝ Նարեկացի, Քուչակ:

Մանկավարժական գործունեության մեջ մենք գործ ունենք մարդու հետ, ում պետք է առաջին հերթին *մարդ* մնալու արժեքը փոխանցենք: Եվ ինչպես ասել է մեծն Թումանյանը.

*Անց ենք կենում… միայն անմահ*
*Գործն է խոսվում լավ ու վատ.*
*Ա՛խ, երանի՝ ո՛վ մարդ կըգա*
*Ու մարդ կերթա անարատ:*

Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմի գլխավոր միտքը *բարի գործի անմահության* գաղափարն է, որն ավելի խոր և ամբողջական է դառնում շնորհիվ պոեմում արտահայտված մյուս գաղափարների՝ հայրենասիրության և դավաճանության հակադրություն, սիրո ոգևորող և կործանիչ ուժի հաստատում, մարդկային կյանքի անցողիկության միտքը:

*Մարդ* լինելու արժեքն է, որ ամենակարևորն է ձևավորել աշակերտի արժեքային համակարգի հիմքում, որն էլ լավագույնս փոխանցվում է լեզու/գրականության դասաժամերին:

Աշակերտների մեջ արժեքային համակարգ ձևավորվում է նաև <<երգ/երաժշտության>>, <<ազգային երգ ու պար>>-ի, <<տեխնոլոգիայի>>, <<շախմատ>>-ի, <<բնագիտամաթեմատիկական>>, <<ֆիզիկական կուլտուրայի>>, <<ՆԶՊ>>,<<կերպարվեստ>> և մյուս առարկաների դասաժամերին: Երեխաների մեջ սերմանվում է սեր դեպի ազգային և համաշխարհային երաժշտությունը՝ զարգացնելով նրանց մեջ ճաշակ, մտածելակերպ, վերաբերմունք և այլ հատկանիշներ երգի ժամերին: Խնդիրները լուծելու կարողություն, ճկունություն, բնագիտամաթեմատիկական և շախմատ առարկաների դասավանդման ընթացքում:

Շատ կարևոր է«տեխնոլոգիա» առարկայի դերը,այն ձևավորում է մշակութային ճաշակ, ճանաչողական կարողունակության, ստեղծագործական միտք, գեղագիտական ճաշակ, համագործակցելու կարողականություն, երևակայական միտք, սեփական մտքերն արտահայտելու կարողունակություն, աշխատասիրություն, գեղագիտական, ժողովրդավարական, սոցիալական, հասարակական, ընտանեկան արժեքներ:

Շատ կարևոր է նշել նաև <<ֆիզկուլտուրա>> առարկայի կարևորության մասին, սովորողներին՝ առողջ ապրելակերպի կարոնները ուսուցանելու տեսանկյունից: Առանձնակի կարևոր է նաև<< ՆԶՊ>> առարկան: Այն աշակերտների մեջ ձևավորում է սեր դեպի ռազմական գործը, հայրենիքը, որի կարիքը մենք ունենք, առավել քան երբեք:

Այսպիսով, բոլոր ուսումնական առարկաները ճիշտ միջառարկայական կապերի կիրառմամբ, խմբային խաղերի միջոցով, բեմականացումներով, քննարկումներով, սալիկաշարերի պատրաստմամբ, միջոցառումների անցկացմամբ, խաղերի միջոցով, ներկայիս լայն մեթոդաբանական գործիքները կիրառելով կարող են, նորովի և նոր մոտեցմամբ, աշակերտների մեջ սերմանել արժեքային մի ամբողջ համակարգ:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում աշակերտների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ է տեխնոլոգիա առարկայի դերը:Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար:

<<Տեխնոլոգիա>> առարկայի նպատակը ստեղծարար, նորարար,նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Տեխնոլոգիական մի շարք առաջընթացներ կամուրջ են հանդիսանում տարբեր մշակույթների միավորման համար: Մշակույթն է մեզ սովորեցնում ինչպես շփվել ուրիշների հետ, ձևավորելով արժեքներ և էթիկայի կանոններ: Այս ամենից զատ հարկ է նշել, որ հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է աշակերտների մոտ ձևավորել հարգանք դեպի օտար մշակույթը և ավանդույթները, ձևավորել գիտելիքներ օտար ժողովրդի արվեստի և արհեստի ճյուղերից: Տեխնոլոգիա առարկայի դասաժամերին արժեքային համակարգը ձևավորվում է հիմնականում համեմատականներ անցկացնելով: Օտար մշակույթը ուսումնասիրելով ձևավորում են հարգանք օտար մշակույթի ինչպես նաև սեփական մշակույթի նկատմամբ: Ձևավորում են հոգևոր արժեքներ, գնահատանք վերարժևորում են սեփական ավանդույթները:

Ուսումնասիրելով տարբեր երկրների տեխնոլոգիական առաջընթացները, մեծանում է ձգտումը դեպի սեփականը ավելի կատարելագործելու և արժևորելու: Ձեռնարկատիրական կրթությունն ուսումնասիրելով տեխնոլոգիայի դասաժամերին, ձևավորվում է մտածելու կարողություն, համագործակցություն, կոլեկտիվիզմ ինչպես նաև հավատ սեփական ես-ի և գաղափարների հանդեպ:

Միջին և հատկապես ավագ դասարանների տարիքային խմբին հատուկ է սոցիումի մեջ արժեքային համակարգ ձևավորելը: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ:

Տեխնոլոգիա առարկան իր մեջ ներառում է արաժեքների մի մեծ փունջ, աշակերտների մեջ սերմանելով մշակութային, բարոյահոգեբանական, գեղագիտական, հոգևոր, ժողովրդավարական ձեռնարկատիրական, սոցիալական, հասարակական ընտանեկան և այլ արժեքներ:

Պարզելու համար, թե որ արժեքներն են ձևավորվում աշակերտների մոտ ուսումնառության ընթացքում հարկ է կատարել հետազոտություն: Հետազոտության ընթացքում հարցմանը մասնակցել են տարրական, միջին և ավագ դպրոցի մի խումբ աշակերտներ:

Հարցին, թե ո՞ր արժեքներն են ձևավորվել ձեր մեջ դպրոցում, տարրական դպրոցի աշակերտների պատասխանը հետևյալն էր. <<*Զինվորը, Հայրենիքը, հայրենասիրությունը*, ընկերասիրությունը հարգանքը, օգնել ընկերոջը, աշխատասիրությունը, կամեցողությունը, վստահությունը,*ծնողասիրությունը*>>:

Միջին դպրոցի սովորողները նշել են հետևյալ արժեքները. <<Ընտանիքը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, կոլեկտիվիզմը, հարգանքը, ազատությունը՝ սեփական մտքերն ու գաղափարներն արտահայտելու, աշխատասիրությունը, մշակութային և հոգևոր արժեքները գնահատելը, վստահությունը, սերը, անկեղծությունը, հավատարմությունը, ընկերությունը>>: Ավագ դպրոցի սովորողները ներկայացրել են հետևյալ արժեքները. <<*Հայրենասիրությունը, վստահությունը, անկեղծությունը, կյանքը*, *սերը, հարգանքը,* կամքը, *հետաքրքրությունը, հավատարմությունը, կրթվելը, խելքը, բարությունը, միմյանց գնահատելը, հավատը առ Աստված, արժանապատվությունը, ճշտախոսությունը, կամեցողությունը, խոհեմությունը,* կոլեկտիվիզմը *առատաձեռնությունը, նվիրվածությունը, աշխատասիրությունը,* մշակութային արժեքները գնահատելը, *ազատությունը, ընկերությունը,* ինքնուրույնությունը, *մարդ լինելը*>>:

Այսպիսով, հետազոտական աշխատանք կատարելուց հետո կարող ենք ասել, որ բոլոր տարիքային խմբերում էլ ձևավորվում է այնպիսի արժեքային համակարգ, որը մեզ՝ ուսուցիչներիս լավատեսությամբ է ներշնչում: Մենք պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին, առավել ևս ներկայիս տեղեկատվական բազմանյութ

իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք չկորցնեն այն:

Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը սովորողների մեջ ձևավորվում է կրթության ընթացքում ստացած տեղեկույթի միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի ուշադրության կենտրոնում: Մեր՝ ուսուցիչներիս դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Քանի որ երեխաները իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Արժեհամակարգ ձեւավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ աննկարագրելի բերկրանք է տեսնելը՝ իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ **եզրահանգումներին**:

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
- Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:
- Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:
- Ե՛վ լեզուն, և՛ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:
- Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ աշակերտների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կարող ենք անել հետևյալ **առաջարկությունները**.

- Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:

- Թատրոններ հաճախելը, էքսկուրսիաները, պատմամշակութային վայրեր այցելելը, հայտնի արվեստագետների, քանդակագործների և արհեստագործների արվեստանոցներ ու արհեստանոցներ այցերը ևս պետք է ներառված լինեն ուսումնական հաստատության գործունեության մեջ, ինչը կարծում եմ էլ ավելի պատկերավոր կդարձնի արժեքների ըմբռնումը:
- Դասաժամերին հավելյալ քննարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու:
  Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողներիմեջ:
- Կազմակերպել հանդիպումներ, ականավոր գործիչների հետ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ананьев Б. Г., О проблемах современного человекознания
2. Գևորգյան Ա. « Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում»
3. Ջեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն»
4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
5. https://www.arlis.am/documentview